Հօտերը հասցնում են գիւղը այն ժամանակ, երբ բոլորովին մթնած է լինում: Գիւղացիք անպատմելի ուրախութեամբ վազում են նրանց առաջ եւ զանազան օրհնութիւններով յայտնում են իրանց շնորհակալութիւնը: Կնիկները համբուրում են նրանց զէնքերը, ասելով.

— Ձեր ոտերի հողը թո՛ղ մեր տղամարդերի գլխի՞ն լինի...

Որքան խնդրում են, որ տղերքը այն գիշերը մնան գիւղում, հիւր լինեն, նրանք չեն ընդունում, միայն Կարօն պատոիրում է, որ առաւօտեան իրանց նստած ձիերը տանեն եւ կապեն այնինչ տեղում, որովհետեւ ձիերը պատկանում են աւազակներին:

Աւարտելով իր պատմութիւնը, ծերունի որսորդը աւելացրուց.

— Տեսնո՞ւմ ես, որդի, «մարդ կայ, որ հազար մարդու արժէ. հազար մարդ կայ, որ մի մարդ չարժէ»: Կարօն, Ասլանը եւ Սագօն էլ մարդիկ են, այն գիւղացիքն էլ մարդիկ են: Բայց ինչպէ՞ս: Երկուսի մէջ այնքան զանազանութիւն կայ, որքան առիւծի եւ կատոի մէջ: Հայ գիւղացին մի քուրդ տեսնելիս փախչում է, իր տունն է մտնում, դռները փակում է, որ գոնեայ իր գլուխն ազատէ. ապրանքը թողնում է դրսում, թշնամին թալանում ու տանում է: Իսկ Կարօն իր երկու ընկերների հետ ապրանքը ետ են խլում: Այդ ինչի՞ց է: Չէ՞ որ երկուսն էլ մի հօր զաւակներ են. չէ՞ որ երկուսի դամարներումը միեւնոյն արիւնն է վազում:

— Ասում են, այստեղ մեղաւոր է ստրկութիւնը, — առաջ տարաւ որսորդը: — Ո՞վ կարող է մարդից խլել նրա ազատութիւնը, ո՞վ կարող է ստրկացնել նրան, եթէ ինքը, մարդը, ցանկութիւն չունի, եթէ նա չէ պատրաստել իրան մի այսպիսի անբախտ վիճակի համար: Մարդն ինքն է թոյլ տալիս ուրիշներին նստել իր շլինքի վրայ: Եւ այդ շատ ձեռնտու է բռնաւորի համար. նա էլ այդ է ցանկանում: Այո՛, մարդն ինքն է պատրաստում իր համար ստրկութիւնը, եւ նրա արմատը դրած է ընտանիքի մէջ: Այն օրից, երբ երեխան աչք է բացում, նրա ձեռքը, ոտքը կապում են եւ դնում օրօրոցի մէջ, — այդ ստրկութեան սկիզբն է: Առաջին խօսքերը, որ մայրը խառնում է օրօրոցի երգերի մէջ, լինում են հոգին թուլացնող, եռանդը մաշող, կամքը եւ միտքը սպանող, եւ նախապաշարմունքներով լի խօսքեր, — դա ստրկութեան առաջին դասն է: Յետոյ մեծանում է մանուկը, նա միշտ ընդունում է ծնողների ապտակը, միշտ զգում է նրանց կոպիտ վարմունքը, միշտ լսում է նրանցից սպառնալիք, սարսափեցնող, բթամտացնող եւ մանուկի ուժը, զօրութիւնը խլող խօսքեր: Դպրոցի մասին ես չեմ խօսում, որովհետեւ այդ դու ինքդ փորձել ես, սիրելի որդի: Բայց աւելի քան դպրոցը, մեծ չարիք է գործում քահանան, այն եւս աստուծոյ անունով: Ի՞նչ մեղք ունի խեղճ գիւղացին, նրան սովորեցնում